«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ»-ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<u>ԹԵՄԱ՝</u> ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ Հակոբջանյան Մայա

ՄԵՆԹՈՐ՝ Բաբաջանյան Վերոնիկա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ 5
1.1. Փոխներգործուն մեթոդների ընդհանուր բնութագիրը 5
1.2. Փոխներգործուն մեթոդների դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործում 9
ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 26
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով:

Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ:

Համագործակցության ճանապարհով ձեռք բերված գիտելիքները ավելի կայուն են, ավելի կիրառելի:Իսկ այս խնդիրը ավելի շատ լուծվում է փոխներգործուն մեթոդների միջոցով,որոնք հիմնականում ենթադրում են համագործակցային ուսուցում:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:

Փոխներգործուն մեթոդների միջոցով ապահովվում են ուսուցման այնպիսի պայմաններ որենց առկայությամբ յուրաքանչյուր սովորող յուրացնում է ոչ միայն ուսումնական նյութը այլ ակտիվորեն փոխգործակցում է իր համադասարանցիների հետ:

Ժամանակակից պահանջներից է նաև ուսուցման գործընթացը իրական կյանքին մոտեցնելը: Այլևս բավարար չէ ուսուցումը որպես կյանքի նախապատրաստություն դիտարկելը: ՈՒսուցումը ինքը պիտի հիմնված լինի կյանքի

իրավիճակների վրա: Հենց այդպիսին են ուսուցման փոխներգործուն մեթոդները: Սրանով այդ մեթոդները օգնում են ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների, կարողությունների զարգացմանը:

Հետազոտության նպատակը՝ ուսումնասիրել փոխներգործուն մեթոդների ազդեցությունը տարրական դասարանների աշակերտների ուսուցման, արդյունավետության բարձրացման վրա:

Հետազոտության *խնդիրներն են.*

1. Թեմայի շրջանակներում առկա գրականության ուսումնասիրություն:
2. Բացահայտել փոխներգործուն մեթոդների դերը ուսուցման գործընթացում:
3. Մշակել փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումներ:

Հետազոտության մեթոդներն են.

1. Գիտամանկավարժական ժամանակակից գրականության ոսումնասիրություն,
2. դասալսումներ, դիտումներ,
3. զրույցներ, հարցաթերթիկներ և այլն:

ԳԼՈՒԽ 1. ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1.1. Փոխներգործուն մեթոդների ընդհանուր բնութագիրը

Ինչպե՞ս երեխան կվարժվի կատարել իր աշխատանքը՝ ուսումը: Կլինի՞ արդյոք, ուսումը գրավիչ նրա համար, կստիպի՞ մտածել, քննադատորեն վերաիմաստավորել: Այս ամենը և շատ այլ բան կախված է նրանից, թե դասի ժամանակ ինչ պայմաններ են ստեղծված երեխաների համար:

Ժամանակակից մանկավարժության գերխնդիրը ոչ թե երեխային սովորել սովորեցնելն է, այլ երեխայի մեջ սովորելու ցանկություն և նոր գիտելիքներ ձեռք բերելու անընդհատ ձգտման ձևավորումը՝ դրանով պայմանավորելով ուսումնական գործընթացի հաջողությունը, ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունները, ինչպես նաև աշակերտ-կոլեկտիվ համագործակցությունը:

ՈՒսումնական գործընթացում կիրառվում են բազմաթիվ մեթոդներ: Մենք մասնավորապես անդրադառնալու ենք այն մեթոդներին, որոնցում առկա է սովորողների դերը, որոնք աշակերտներին դարձնում են գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացի մասնակիցը:

Փոխգործուն մեթոդներն աշակերտներին տալիս են ոչ միայն ուսուցչի, այլև մեկը մյուսի հետ համագործակցելու հնարավորություն: Փոխգործուն մեթոդների ուսուցումը հիմնված է ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների համագործակցության վրա: Փոխգործուն մեթոդներն ունեն անձնակողմնորոշիչ ուղղվածություն, քանի որ այս մեթոդները ենթադրում են կոլեկտիվ, համագործակցային ուսուցում, որի շրջանակներում և՛ ուսուցիչը, և՛ աշակերտները ուսումնական գործընթացի սուբյեկտներ են: ՈՒսուցիչը հաճախ հանդես է գալիս, որպես ուսումնական գործընթացի կազմակերպիչ:[13,էջ 164]

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ փոխգործուն մեթոդները հնարավորություն են տալիս կտրուկ բարձրացնել յուրացրած ուսումնական նյութի որակը, հարստացնել ձեռք բերած տեսական գիտելիքները, ձևավորված կարողությունները և հմտությունները կիրառել ոչ միայն դասի ընթացքում, այլև

կյանքում և ազդում են ոչ միայն աշակերտի գիտակցության, այլև զգացմունքների և կամքի վրա:

Այս կամ այն մեթոդի կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է՝

- դասի նպատակներով,
- ուսուցչի ունակություններով,
- աշակերտների պատրաստվածության աստիճանով,
- աշակերտների հետաքրքրությունների սահմանով:

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խորը և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու մի ջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Նոր և շատ մեթոդների իմացությունը թեև անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ արդյունավետ դասավանդման համար: Կարևոր է նաև մեթոդները հմտորեն համադրելու և նպատակահարմար կիրառելու մասնագիտական կարողությունը:

Ժամանակակից ուսուցչի մասնագիտական հիմնական գործառույթներն են մանկավարժական աջակցություն, ուղղորդում և համագործակցություն յուրաքանչյուր աշակերտին: :[8,էջ 402]

Եթե ուսուցիչը կիրառում կամ աշխատում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիայով,ուրեմն ապահովում է աշակերտի ճանաչողական շարունակական գործընթացը: Այսօր տեղեկատվության 50%-ից ավելին երեխային տալիս են ոչ թե ուսուցիչն ու դպրոցը, այլ զանգվածային լրատվական միջոցները,համացանցը, ծնողը, ընկերը, փողոցը, շրջապատող կյանքի սեփական դիտարկումները:

Սա մանկավարժական գործընթացի որակական նոր մակարդակ է, նոր մոտեցում, որը հնարավոր է միայն սովորողի ուսուցման փոխներգործուն մեթոդների և ժամանա կակից տեխնոլոգիաների գործելու դեպքում:

Ավանդական դպրոցում սովորողն ավելի շատ գիտելիքների որոշակի պաշար ընկալող ու մտապահող էր:[15,էջ 176]:

Մինչդեռ այսօր փոխներգործուն մեթոդները երեխային մղում են նախաձեռ նության,ստեղծագործական մոտեցման, ինքնուրույն դատողություններ անելու: Այս պարագայում ցանկացած ուսումնական նյութ երեխան շատ արագ կարող է յուրացնել:

Ուսուցչի համար շատ կարևոր է իմանալ սովորողի ելակետային մակարդակը, որպեսզի ուսուցումը սկսի այնտեղից, ուր գտնվում են սովորողները: Դասը պիտի լինի աշակերտի պատկերացումների շարունակությունը:

- Ժամանակակից պահանջներից է ուսուցման գործընթացը իրական կյանքին մոտեցնելը: Այլևս բավարար չէ ուսուցումը՝ որպես կյանքի նախապատրաստություն դիտարկելը: Ուսուցումը ինքը պիտի հիմնված լինի կյանքի իրավիճակների վրա: Հենց այդպիսին են ուսուցման ինտերակտիվ մեթոդները: Սրանով այդ մեթոդները օգնում են ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների, կարողությունների զարգացմանը:
- Երկխոսության, հաղորդակցման գործոնը: Ժամանակակից հասարակությունը շատ խայտաբղետ է դարձել: Որպեսզի այդ խայտաբղետությունը նպաստի հասարակության զարգացմանը, անհրաժեշտ է երկխոսության մթնոլորտի ստեղծում, հաղորդակցական հմտությունների զարգացում: Ձեռնարկում ներկա-յացվող ուսուցման մեթոդների ու մեթոդական հնարների արդյունավետությունը մեծապես կախված է երկխոսության որակից:

Այդուհանդերձ, չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի:

Փոխներգործուն ուսուցումը ենթադրում է ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխգործունեություն. որի նպատակն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, ինչը խթանում է անձի լիարժեք ցարգացումը:[21, էջ 76] Ընկերների հետ փոխադարձորեն շփվելը, նրանց հետ ինչ-որ միտք կիսելը կարգապահական վարքագիծ է: Սեփական պատ կերացումները, մտքերն ու կարծիքներն ուրիշներին հաղորդելը բավական համարձակ քայլ է: Աշակերտը ստիպված է բացեիբաց ցուցադրել ուրիշներին, թե ինքն ինչպիսի մտածողության և ինչ պատկերացումների տեր է: Դասարանում ընկերների հետ մտքեր կիսելը ենթադրում է, որ աշակերտը պետք է կարողանա լսել, կասեցնել իր դատողու թյունները կամ խոսակցությունը սեփական ձևով տանելու ներքին պահանջը: Որպես վախհատուցում

նրանք ստանում են ուրիշների կարծիքը, ընդլայնված համատեքստը, ուր նրանք կարող են տեղադրել սեփական մտքերը և դրանք հարմարեցնել պատկերացումների այն կտավի մեջ, որ հետագայում ստեղծվում է ուսման և կենսափորձի միջոցով: Մյուս կողմից էլ աշակերտները, սեփական արժեքի ու արժանապատվության վստահություն չունենալու դեպքում, չեն համարձակվի իրենց մտքերն արտահայտել: Իսկ եթե նրանք տեսնում են, որ իրենց մտքերը կարևորվում են, ուսուցիչն իսկապես հարգում ու գնահատում է իրենց մտքերն ու պաակերացսւմները, նրանք շատ ավելի մեծ պատասխանատվությամբ և զգուշությամբ են մոտենում սեփական մտքի մասունքին:

Փոխներգործուն ուսուցման հիմնական նպատակը կրթական գործընթացի մարդասիրական սկզբունքն է: Այն պահանջում է վերանայել ուսուցման ողջ բովանդակությունը, այսինքն՝ ճանաչել յուրաքանչյուր երեխայի անձի ստեղծագործ բնույթը: Նրա ներքին ակտիվությունը հանգեցնում է համապատասխան գիտելիքների որոշակի ծավալի յուրացումը կրթական գործընթացի գլխավոր նպատակ ճանաչելուց հրաժարման: Գլխավոր նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է: Իսկ անհատի զարգացման միջոցը, որը բացահայտում է նրա ներքին ընդունակությունները, ինքնուրույն իմացական և մտավոր գործունեությունն է: Հետևաբար, ուսուցչի խնդիրն է դասի ժամանակ ապահովել այնպիսի գործունեություն, որին նպաստում են ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաները: Այս դեպքում աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին: Գիտելիքների յուրացումը նրա գործունեության արդյունքն է: :[22,էջ 24]

Տարրական դպրոցում դասերի ժամանակ անհրաժեշտ է կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, քանի որ դրանք թույլ են տալիս նյութը մատուցել մատչելի, հետաքրքիր, վառ և պատկերավոր ձևով, նպաստում են գիտելիքների ավելի խորը յուրացմանը, հետաքրքրություն են առաջացնում գիտելիքների ձեռքբերման հանդեպ, ձևավորում են հաղորդակցական, անձնական, սոցիալական, ինտելեկտուալ բանիմացություն:

1.2. Փոխներգործուն մեթոդների դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործում

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ՝ փոխներգործուն մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում

ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն):[13,էջ 163]

Փոխներգործուն մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Այս մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Փոխներգործուն մեթոդների մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Սրանք զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ,կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ

Փոխներգործուն մեթոդները նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեությանը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Այն բնութագրվում է աշակերտների ակտիվության բարձր մակարդակով:[ ]Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից:

<<Տարրական դպրոցի կարևոր խնդիր է հանդիսանում երեխաներին հաղորդակցության տարբեր ձևեր սովորեցնելը: Խմբային ուսուցման մեթոդի կիրառումը շատ արդյունավետ է տվյալ խնդիրը իրականացնելիս: 1-ին և 2-րդ դասարաններում ես կիրառում եմ զույգերով աշխատանքը: Զույգերով աշխատանքը ես դիտում եմ որպես առաջին դասարանցիների գործնական միջանձնային հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլ: Զույգերով աշխատանքը ուսումնական գործընթացի կազմակերպման առավել հարմարավետ ձևն է, որի

նպատակն է գործնական միջանձնային հարաբերությունների ձևավորումը: Զույգերով աշխատանքը երեխաների մոտ ձևավորում է ընդհանուր նպատակն ընդունելու, պարտականությունները բաժանելու, առաջարկված նպատակին հասնելու եղանակները համաձայնեցնելու, իր գործողությունները համատեղ գործունեության մեջ գործընկերոջ գործողությունների հետ հարաբերակցելու, աշխատանքի նպատակի և արդյունքի համեմատության մեջ մասնակցություն ունենալու ունակությունները››

Փոխներգործուն մեթոդները հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, սովորողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: Այս մեթոդների կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա:[22,էջ 30] Մեթոդների կիրառումը նաստում է՝

- ✓ ՈՒսումնական դրական խթանի ձևավորմանը,
- ✓ Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,
- ✓ Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավմանը,
- ✓ Ինքնագործունեության խթանմանը,
- ✓ Ճանաչողական գործընթացների զարգացմանը՝ խոսք, հիշողություն, մտածողություն
- ✓ Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,
- ✓ Ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը,
- ✓ Աշակերտի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացմանը

Դպրոցի տարրական դասարաններում միշտ էլ մեթոդական հիմնախնդիր է եղել միջառարկայական կապերի կիրառումը: Այն շատ դեպքերում կրել է մեխանիկական բնույթ:

Սակայն այլ են նորագույն մանկավարժական մոտեցումների ու ծրագրերի պահանջները: Տարրական դպրոցում ընթերցանության դասերի ընթացքում

պահանջվում է նյութից բխող ինտեգրում նույն դասարաններում ուսումնասիրվող առարկաների միջև՝ բացատրական ընթերցանություն-մայրենի-կերպարվեստ, մայրենի-աշխատանքի ուսուցում- մաթեմատիկա և այլն: Այս ծրագրի իրականացումը պահանջում է և՛ գիտելիքներ, և՛ տեղեկատվություն, և՛ ստեղծագործական միտք ու վարպետություն: Ուշագրավ է ինտեգրումը ընթերցանության և քերականության միջև: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերը կազմված են հենց ինտեգրման սկզբունքով, որի պահանջն է՝ իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցում՝ ընթերցանության նյութերի միջոցով:

Ինտեգրված դասի ընթացքում աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից: Հասկանալի է, որ տարրական դասարանների աշակերտները լիովին ի վիճակի չեն լինի գտնելու հարցաշարերում առաջադրված բոլոր հարցերի պատասխանները: Այս դեպքում համագործակցված աշխատանքը կրելու է աշակերտ-ծնող, աշակերտ-տեղեկատվականգիրք, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ զույգերով կամ խմբային կիրառության ձևը:

Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտեների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազնակողմանի զարգացման առումով:

Միջառարկայական կապերի ստեղծումը կարևոր պայման է երեխաների մտավոր կարողությունների զարգացման համար: Գիտակ ուսուցիչը, եթե ուզում է հասնել հաջողարդյունքի, իր գործունեության մեջ միջառարկայական կապեր ստեղծելու համար պետք է ընդգրկի ուսուցման փոխներգործուն մեթոդները: Փոխներգործուն

մեթոդներով ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահումևվերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռք բերում: Ուսուցմանճանաչողական գործընթացը ակտիվացնելո ւհամար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը, հաղորդակցական կարողությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ այս մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կրտսեր դպրոցում փոխներգործուն մեթոդների կիրառման միջոցով աշակերտների ստեղծագործական կարողությունների ձևավորումը ուսումնասիրելու նպատակով իրականացրել եմ աշխատանքներ 3-րդ և 4-րդ դասարաններում:

Հետազոտության առաջին փուլում իրականացրել ենք մշտադիտարկում՝ դիտումներ, դասալսումներ, պարզելու համար,թե ինչ փոխներգործուն մեթոդներ են կիրառում տարրական դպրոցում:

Դիտումները ցույցտվեցին հետևյալ պատկերը:

Տարրական դասարաններում կիրառվող փոխներգործուն մեթոդներ



Դիտումների արդյունքների հիման վրա կատարել եմ եզրակացություններ

Մտագրոհ	Խթանում էր աշակերտների ստեղծագործական կարողությունները, հեշտ էր ընկալվում նրանց կողմից
Քառաբաժան	Նպաստում էր նյութի ամբողջական ընկալմանը
Փոխգործուն նշանների համակարգ	Օգնում էր աշակերտներին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումները: Կրդալու ընթացքում արված նշումները ծառայում էին որպես հարմար տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար:
Խճանկար	Աշակերտները տեղեկություններ էին փոխանակում, կարողանում էին ինքնուրույն աշխատել, մտածել ստեղծագործաբար և քննադատաբար:
T-աձև աղյուսակ	Աշակերտներին տվեց համեմատելու, քննարկելու հնարավորություն, ինչի արդյունքում նրանք կարողացան գիտակցել ինչն է նպաստում ճիշտ կեցվածքի ձևավորմանը, ինչը՝ ոչ:
Վենի դիագրամ	Կարողանում էին հակադրել գաղափարները, նշել դրանց ընդհանրությունները. գրառել ընդգրկուն ձևակերպումներ:

Պրիզմա	Խրախուսում էր սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել,խթանում էր նրանց ակտիվությունն ու հետաքրքրությունը:
Երեք բանալի, մեկ կողպեք	Սովորողների մոտ ձևավորում էր ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն: Ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Ինչպես նաև գրանցել եմ փոխներգործուն մեթոդների կիրառման ուժեղ և թույլ կողմերը:

ՈՒժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Աշակերտների մոտ համագործակցության հմտությունների ձևավորում: 2. Դասաժամի ժամանակի օգագործման արդյունավետություն: 3.Դասապրոցեսում բոլոր երեխաների ներգրավում: 4.Թույլ աշակերտին ինքնադրսևորվելու հնարավորության ընձեռում: 5.Դասապրոցեսը երեխաների համար ավելի հետաքրքիր է դարձնում:	1. Արդարացի գնահատման սահմանափակումները: 2. Ուսուցչի կողմից երկար պատրաստվելու պահանջը :

Նույն դիտումների շրջանակներում գրանցել եմ նաև աշակերտների ուսումնական գործունեության կազմակերպման ձևերի մասին տվյալներ,որից պարզ դարձավ,որ դպրոցներում գերիշխում են ֆրոնտալ ,անհատական և խմբային ձևերը:



Հետազոտության ընթացքում կիրառել եմ հարցաթերթիկ՝ուղղված տարրական դասարաններում աշխատող ուսուցիչներին:Հարցաթերթիկի միջոցով փորձել եմ պարզել

ա) Թե որ փոխներգործուն մեթոդներն են նպաստում ուսուցման արդյունավետության բարձրացմանը



բ) ԽԻԿ համակարգով աշխատելիս որ մեթոդը որ փուլում է նպատակահարմար կիրառել

Խթանման փուլի մեթոդներ



Իմաստի ընկալման փուլի մեթոդներ



Կշռադատման փուլի մեթոդներ



գ) Փոխներգործուն մեթոդներից որոնք են հանդիսանում միջառարկայական կապերի ստեղծման արդյունավետ հնար:



Հետազոտության երկրորդ փուլում կատարել ենք աշխատանքներ բացահայտելու աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացվածության

մակարդակը: Որպես հետազոտության հիմք ընդունել ենք ստեղծագործականության հետևյալ բնութագրիչները՝աշակերտի ձգտումը մտածել օրիգինալ,ոչ ստանդարտ, ինքնուրույն գտնել և ընդունել որոշումներ, դրսևորել իմացական հետաքրքրություն, բացահայտել նորը,անծանոթը,ինչպես նաև առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը: Դիտումներն ու կատարած դասալսումները երկու զուգահեռ դասարաններում ցույցտվեցին, որ աշակերտների մեծ մասի մոտ այն միջին մակարդակի է:

Աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացվածության մակարդակներն ուսումնասիրություններ կատարելու սկզբում



Հետազոտության հաջորդ փուլում իրականացվեց փորձարարական աշխատանք՝միտված աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:Նշված դասարաններում ուսուցչի օգնությամբ իրականացրել ենք փոխներգործուն մեթոդներով դասավանդում <<Մայրենի>> և <<Եսևշրջակաաշխարհը>> առարկաների դասաժամերին:

Օրինակ՝ Ազնվաբարոների վեճը (Մայրենի 3-րդ) դասի խթանման փուլում կիրառել ենք <<Մտագրոհ>> մեթոդը: ՈՒսուցիչն առաջադրեց հետևյալ հարցը. <<Մեկ բառով բնութագրեք ձեր շրջապատում ապրող մարդկանց>>: Այնուհետև գրատախտակին գրանցեց բոլոր մտքերը:

Օրինակ՝բարի, ազնիվ, համեստ, կռվարար, խռովկան, խելոք և այլն:

Իմաստի ընկալման փուլում աշակերտներն ընթերցեցին դասանյութը, այնուհետև իրենց վերաբերմունքն արտահայտեցին պատմվածքի հերոսների նկատմամբ: Նրանց լսելուց հետո

Ուսուցիչն անդրադարձավ մտագրոհին՝կատարվեցին լրացումներ,քննարկումներ: Այնուհետև աշակերտներն ընտրեցին իրենց համար դերեր և դերային խաղով ներկայացրեցին բնագիրը:

Կշռադատման փուլում կիրառվեց <<Քառաբաժան>> մեթոդը: ՈՒսուցիչն աշակերտներին բաժանեց աշխատանքային խմբերի, և նրանք պատասխանեցին հետևյալ հարցերին.

Բնութագրիր պատմվածքի հերոսներին,Ի՞նչ զգացմունքներ ունեցաք,Պատմվածքի բովանդակությունն ի՞նչ հիշեցրեց ձեզ,Պատմվածքին տվեք նոր վերնագիր:

Ներկայացնեմ մեկ այլ կատարած դասալսման մեթոդական նկարագրություն

Թեման՝ Հովհ. Թումանյան <<Բզեզի դպրոցը>> (Մայրենի 4-րդ):

Դասի խթանման փուլում Զրույցի մեթոդն կիրառելով՝ուսուցչուհին սովորողներին առաջադրեց հարցեր բույսերի,միջատների մասին.ի՞նչ բույսերեք ճանաչում,ի՞նչպիսի միջատներ գիտեք, ի՞նչ կարողեք պատմել նրանց մասին և այլն:ՈՒսուցիչն ինքն էլ որոշ տեղեկություններ հաղորդեց, ասենք,օրինակ,թե ինչ կազմակերպված ու հետաքրքիր է մրջյունների կյանքը,ինչպես կարող է բույսը բուժել,ինչպես կարելի է բույսերի միջոցով կռահել օրվա ժամը,եղանակը և այլն:Զրույցի մեթոդի շնորհիվ սովորողների ուշադրությունն սևեռվեց այն բանի վրա,թե ինչքան հետաքրքիր ու զարմանալի է բույսերի ու կենդանիների աշխարհը:

Իմաստի ընկալման փուլում սովորողները ընթերցեցին դասանյութը:Այնուհետև փոխներգործուն գրառումների համակարգ մեթոդը կիրառելով ուսուցիչը հանձնարարեց բանաստեղծության մեջ հանդիպող ծանոթ բույսերն ուկենդանիները նշել V-ով, իսկ անծանոթները՝+-ով: Աշխատանքն ավարտվելուց հետո կազմակերպվեց զույգերով մտքերի փոխանակություն: Քննարկվեցին բոլոր ծանոթ բույսերն ու միջատները,յուրաքանչյուրը պատմում էր իր իմացածը:

Դասի կշռադատման փուլում կիրառվեց խճանկարի մեթոդը: ՈՒսուցիչը սովորողներին բաժանեց հենակետային խմբերի և յուրաքանչյուր խումբ ստացավ իր

հանձնարարությունը (խմբի յուրաքանչյուր անդամ հանդիսանում էր որևէ ենթաթեմայի ուսումնասիրող):

Մի խումբը պետք է տեղեկություններ հավաքեր խոտաբույսերի մասին,մյուսը՝ ծառերի, երրորդը՝ միջատների, չորրորդը՝ մրգերի ,բանջարեղենի ու հատապտուղների մասին:

Սովորողներին բացատրվեց, որ նրանք կարող են օգտվել բառարաններից,համացանցի որոնողական համակարգերից, աշխատանքին կարող են ներգրավել ծնողներին,ընտանիքի մյուս անդամներին :

Ներկայացնեմ օրինակներ <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայից

Դասի թեման - Երկրի օդային հագուստը

Խթանման փուլ՝ ներկայացնել <<Երկրի օդային թաղանթ>> հասկացությունը,ձևավորել համոզմունք, որ թեև օդն անտեսանելի է, այնուամենայնիվ այն բնական մարմին է:Հատուկ ուշադրություն դարձնել բնապահպանական խնդիրներին:

Իմաստի ընկալման փուլում կիրառել <<Փոխներգործուն նշանների համակարգ>> մեթոդը: Դասանյութն ընթերցելու ժամանակ աշակերտները նշումներ կատարեցին ուսուցչի կողմից նախապես պատրաստված հատուկ աղյուսակում՝ օգտագործելով հետևյալ նշանները.

V- ես դա գիտեմ,

+ - ես դա նոր իմացա,

?- սա ինձ համար անհասկանալի է,

! – սա շատ հետաքրքիր է,կուզենայի ավելի շատ բան իմանալ այս մասին:

Երբ աշակերտները ավարտեցին աղյուսակի լրացումը, կազմակերպվեց մտքերի փոխանակություն:

Մեկ այլօրինակ՝

Դասի թեման-Մեր կեցվածքը (Շրջակա 3)

Դասի խթանման փուլում կիրառվեց մտագրոհի մեթոդը՝ կեցվածքի մասին աշակերտների ունեցած պատկերացումները պարզելու համար և այդ նպատակով տրվեց հետևյալ հարցը .Ի՞նչ դիրքով պետք է նստել գրասեղանի մոտ, դասերը

պատրաստելիս: Գրատախտակին գրի առնվեց աշակերտների ասածները և հնարավորություն տրվեց արտահայտելու իրենց կարծիքը:

Իմաստի ընկալման փուլում գրատախտակին գծվեց Т-աձև աղյուսակ և աշակերտները սկսեցին լրացնել:

Կշռադատման փուլում աշակերտները բաժանվեցին 4 հոգանոց խմբերի և հանձնարարվեց պատրաստել ցուցապաստառ,որտեղ պետք է արտացոլվեր այն ամենը, ինչ անհրաժեշտ է ճիշտ կեցվածք ունենալու համար:

Բերված օրինակներում կիրառվել են հետևյալ փոխներգործուն մեթոդները և հետևել, թե որքանով են դրանք ակտիվացնում դասապրոցեսը և շարժում աշակերտների հետաքրքրությունները.

Մտագրոհ	Խթանում էր աշակերտների ստեղծագործական կարողությունները,հեշտ էր ընկալվում նրանց կողմից
Քառաբաժան	Նպաստում էր նյութի ամբողջական ընկալմանը
Փոխգործուն նշանների համակարգ	Օգնում էր աշակերտներին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումները: Կրդալու ընթացքում արված նշումները ծառայում էին որպես հարմար տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար:
Խճանկար	Աշակերտները տեղեկություններ էին փոխանակում,կարողանում էին ինքնուրույն աշխատել,մտածել ստեղծագործաբար և քննադատաբար:
Т-աձև աղյուսակ	Աշակերտներին տվեց համեմատելու,քննարկելու

	հնարավորություն,ինչի արդյունքում նրանք կարողացան գիտակցել ինչն է նպաստում ճիշտ կեցվածքի ձևավորմանը,ինչը՝ ոչ:

Նշված բոլոր օրինակներում աշակերտները մեծ հաճույքով և հետաքրքրությամբ էին մասնակցում դասապրոցեսին, ավելի ակտիվ էին, անկաշկանդ: Փորձարարական աշխատանքներն ավարտին հասցնելով մեր հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտների ստեղծագործական կարողությունների մեջ կատարվել են որոշակի փոփոխություններ:



Կատարած ուսումնասիրություններն ու հետազոտակա նաշխատանքները ցույց տվեցին, որ տարրական դասարանների աշակերտների ստեղծագործական կարողությունները զարգանում են դասապրոցեսում փոխներգործուն մեթոդների կիրառմամբ,աշակերտների մոտիվացիայի զարգացման և նրանց գիտակցական աշխատանքի շնորհիվ:Հետազոտվող դասարաններում բարձրացել էր ուսման արդյունավետությունը,երեխաները ավելի հաճույքով էին մասնակցում դասերին,փոխվել էր նրանց վերաբերմունքը դասերի նկատմամբ:

Հետազոտության ավարտին կատարած ուսումնասիրություններն ու մշտադիտարկումը ցույց է տվել աշակերտների իմացական ակտիվության ցուցանիշի աճ:

Աշակերտների իմացական ակտիվության աճ



Առանձնահատկությունները, որոնք գրանցեցինք այդ կարճ ժամանակահատվածում հետևյալն էին.

Նորի նկատմամբ հետաքրքրվածություն,

Նախաձեռնողականություն,

Ակտիվություն,

Սխալվելու վախի նվազում,

Անկաշկանդվածություն

Ուսման մոտիվացիայի զարգացում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այսպիսով, փոխներգործուն մեթոդները ապահովում են՝

- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում,
- Կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավում,
- Ինքնուրույնության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում-խոսք, հիշողություն, մտածողություն,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

2. Փոխներգործուն մեթոդներն ստեղծում են ամեն անգամ գիտելիքն ինքնուրույն <<կառուցելու>> և նորը հայտնագործելու միջավայր.ի տարբերություն պասսիվորեն ձեռք բերած <<փոխանցված գիտելիքի>>,հետազոտության շնորհիվ ակտիվորեն կառուցված գիտելիքն առավել արդյունավետությամբ է ընկալվում և յուրացվում,երկար է պահպանվում հիշողության մեջ, ունենում է կիրառական նծանակություն և այս ամենը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աշոտ Տեր-Գրիգորյան <<Միջառարկայական կապերը տարրական դպրոցում>> Ե.1986թ:
2. Գյուլամիրյան Ջ., «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան, Զանգակ, 2015, 316 էջ:
3. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:
4. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:
5. Մայրենի 4,Մեթոդական ձեռնարկ,Երևան <<9-րդ հրաշալիք>> 2009:
6. Մայրենի 3,Մեթոդական ձեռնարկ,Երևան <<9-րդ հրաշալիք>> 2008:
7. Սարգսյան Վ. Ա., Թորոսյան Կ. Ա., Խաչատրյան Հ. Վ., Ջիլավյան Ե. Խ., «Մայրենի 3», Երևան, «Մակմիլան- Արմենիա» հրատ., 2011, 159 էջ:
8. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:
9. «ՈՒսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ» , Վանաձոր, Կրթության ազգային ինսիտուտ, Լոռու մասնաճյուղ, 2008, 101 էջ:
10. Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Այրեքս, Երևան 2011, էջ 28-29